

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի ինֆորմացիոն տեխնոլոգիաների
տեխն.գ.դ., պրոֆեսոր Ռ. Սահակյան
0 2023թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ալվարդ Գարեգինի Սարուխանյանի «7-9 –րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» խորագրով ԺԳ 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ալվարդ Գարեգինի Սարուխանյանի «7-9 –րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» և «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 4, կայացած՝ 02.10.2023թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ. դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, դասախոսներ՝ Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի տեխ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Օհանյանը, Ս. Էքսուզյանը, ֆ.մ.գ.թ., դոցենտներ՝ Մ. Սաքանյանը, Ռ. Կոռյանը, Ա. Կյուրեղյանը, Գ.Քանարյանը, ասիստենտ Ա. Բաղդասարյանը, դասախոսներ՝ Կ. Սիրադեղյանը, Ս. Սարգսյանը, Ա. Գրիշկյանը:

Մաթեմատիկայի դասավանդման ժամանակ հասկացությունների ձևավորման խնդիրը բարդ է, քանի որ աշակերտներն անընդհատ առնչվում են ընդհանրացումների և վերացարկումների հետ, մասնավորապես սիմվոլիկ լեզվի հետ, որպես հասկացության արտահայտման եղանակ, գործիք: Հասկացության ձևավորման եզրափակիչ և կարևորագույն փուլը հանդիսանում է նրա սահմանումը: Հետևաբար մաթեմատիկայի դասավանդման ժամանակ սահմանումների ուսուցման արդյունավետ մեթոդիկայի մշակումը ստանում է վճռորոշ նշանակություն:

Հեղինակը գիտամանկավարժական, մեթոդական գրականության համակողմանի ուսումնասիրության, ինչպես նաև միջին դպրոցի «Երկրաչափություն» առարկայի գործող դասագրքերում ներդրված երկրաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկայի վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ միջին դպրոցի 7-9-րդ դասարանների երկրաչափության գործող դասագրքերում ներդրված չէ սահմանումների ուսուցման համալիր մեթոդիկա: Հեղինակը պարզել է նաև, որ 7-9 դասարանների «Երկրաչափություն» առարկայի գործող դասագրքերում ընդգրկված խնդիրների համակարգը չի նպաստում հարթաչափության հասկացությունների սահմանումների յուրացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հեղինակը նպատակ է դրել մշակել միջին դպրոցի «Երկրաչափություն» առարկայի գործող դասագրքերում առկա հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման նոր մեթոդիկա և այդ ուսուցմանն ուղղված խնդիրների համակարգ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 120 համակարգչային էջ:

Ատենախոսության առաջին գլխում Ա. Սարուխանյանը հոգեբանամանկավարժական հետազոտությունների դիտարկման արդյունքում պարզաբանել է թեմայի տեսական հիմքերը, ներմուծել «հասկացության ծավալ» և «հասկացության բովանդակություն» եզրույթները, ներկայացրել դրանք համապատասխան օրինակներով:

Այստեղ հեղինակն առանձնացրել է սահմանումների տեսակներն ըստ նրանց տրամաբանական կառուցվածքի՝ իրական, անվանական, դասական ըստ սեռի և տեսակային տարբերության, անդրադարձ, աքսիոմատիկ, գենետիկ և այլն:

Պարզաբանված են սահմանումների կառուցվածքի դիզյունկտիվ, կոնյուկտիվ, կոնյուկտիվ-դիզյունկտիվ տեսակները, բերված են համապատասխան օրինակներ: Բերվել են այն կարևորագույն պահանջները, որոնց պետք է բավարարեն սահմանումները՝ արատավոր շրջանի բացակայության, օմոնիմիայի բացակայության և այլն:

Շեշտվել է, որ հասկացության բովանդակությունը բացահայտվում է սահմանման միջոցով, իսկ ծավալը՝ դասակարգման: Տրվել է դասակարգման եղանակ բազմությունը որևէ հատկությամբ զույգ առ զույգ չհատող ենթաբազմությունների տրոհելու միջոցով: Դիտարկվել են օրինակներ հարթաչափությունից, կազմվել բլոկ սխեմաներ (տրված սահմանմամբ բնութագրվող հասկացությունների հայտնաբերման ալգորիթմի միջոցով): Պետք է նշել, որ հեղինակը վերոնշյալ ուսումնասիրությունը իրականացրել է հմտորեն, ուսումնասիրվող նյութի խորն իմացությամբ՝ պահպանելով առարկային հատուկ ակադեմիական մակարդակը:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է մաթեմատիկայի դասավանդման փորձի իր ուսումնասիրությունը և հանգում եզրակացության, որ դպրոցում մաթեմատիկական հասկացությունների (7-9-րդ դասարանների հարթաչափական հասկացությունների) ձևավորման գործող մոտեցումը չի համապատասխանում և ոչ մի տրամաբանական սխեմայի:

Հեղինակը հասկացությունների սահմանումների ուսուցման առկա մեթոդիկայում առանձնացրել է որոշ թերություններ:

Միաժամանակ ներկայացնում է միջին դպրոցի 7-9-րդ դասարանների երկրաչափության հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման իր կողմից մշակված մեթոդիկա և տիպային խնդիրների համակարգ, որոնք իրենց տրամաբանական կառուցվածքով և կիրառական ուղղվածությամբ հնարավորինս լրացնում են վերոնշյալ բացերը: Առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը հեղինակը հիմնավորում է գիտափորձերով, որոնք նկարագրված են աշխատանքում: Հատկապես հաջողված ենք համարում եռանկյան միջին գծի սահմանմանը վերաբերվող դրվագը:

Ատենախոսն ունի հրատարակված 9 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ:

Վերլուծելով Ա. Սարուխանյանի ատենախոսական աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

- Հեղինակի կողմից կատարվել է հիմնահարցի տեսական հիմքերի խորը վերլուծություն,
- Վերլուծվել է միջին դպրոցում «Երկրաչափություն» առարկայի հասկացությունների սահմանումների համակարգը, վերհանվել են թերությունները,
- Առաջարկվել է 7-9 –րդ դասարանների երկրաչափության հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա,
- Մշակվել է հարթաչափական հասկացությունների սահմանումների ձևավորմանն ուղղված տիպային խնդիրների համակարգ,
- Իրականացվել է մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորող գիտափորձ:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը վերլուծեր մաթեմատիկական հասկացությունների սահմանումների և մաթեմատիկական նախադասությունների (աքսիոմներ, պոստուլատներ, թեորեմներ) փոխկապակցվածությունը (աքսիոմները կարելի է դիտել որպես հիմնական, չսահմանվող հասկացությունների անբացահայտ սահմանումներ),
2. կարելի էր ուշադրություն դարձնել սահմանումների ժխտման կառուցման կանոններին, որոնք հաճախ հեշտացնում են խնդրի լուծումը,
3. 204 ենթագլուխը վերնագրված է «Մանկավարժական գիտափորձի նկարագրություն», մեր կարծիքով ճիշտ կլիներ այն ձևակերպվեր «Մանկավարժական գիտափորձի վերլուծություն»,
4. Եզրակացություններից 3-րդը խմբագրման կարիք ունի,
5. Աշխատանքում առկա են նաև տպագրական վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

Աշխատանքը կատարված է գիտական պատշաճ մակարդակով և համապատասխանում է ատենախոսական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են
ատենախոսության բովանդակությանը, ամբողջությամբ արտահայտում
ատենախոսության հիմնական բովանդակությանը:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը,
տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների
հավաստիությունը և հիմնավորվածությունը հիմք են հանդիսանում փաստել, որ
Ալվարո Գարեգինի Սարուխանյանի «7-9-րդ դասարանների «Երկրաչափություն»
առարկայի հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման
մեթոդիկա» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական
աշխատանք է, ունի կարևոր տեսական և գիտական նշանակություն,
համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի
7-րդ կետի պահանջներին և ԺԳ. 00. 02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա
(մաթեմատիկա)» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի

ամբիոնի վարիչ՝ / *ՕԼԵ* / տեխն.գ.թ., դոցենտ Հ. Օհանյան

Մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ / *Բաղդասարյան* / տ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյան

Հ. Օհանյանի և Լ. Բաղդասարյանի ստորագրությունները հաստատում եմ

ՎՊՀ-ի գիտքարտուղի,

Մ. գ. թ., դոցենտ՝ *Մ. Ս. Բեժանյան*

